

ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ «ՌԱԲԻՎԱՔՍ-Ս» (RABIVAX-S) ԻՆԱԿՏԻՎԱՑՎԱԾ
ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել կատաղության դեմ «Ռաբիվաքս-Ս» ինակտիվացված պատվաստանյութի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել:
 - 1) Սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ «ՌԱԲԻՎԱՔՍ-Ս» ԻՆՎԵՏԻՎԱՅՎԱԾ

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն (կատաղության դեմ ինակտիվացված (լիոֆիլացված) պատվաստանյութ), մանրէազերծ, մաքրված, ինակտիվացված կատաղության դեմ պատվաստանյութ է՝ պատրաստված Վերո բջիջների կուլտուրայում:
2. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն լիոֆիլացված է և թողարկվում է հավաքածուի ձևով՝ լուծիչի հետ (1 դեղաչափ պատվաստանյութի շշիկ և 1 մլ լուծիչի սրվակ): Պատվաստանյութն իրենից ներկայացնում է սպիտակ գույնի լիոֆիլիզատ:
3. Պատվաստանյութը համապատասխանում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության պահանջներին:

2. ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

4. Յուրաքանչյուր 1մլ դեղաչափը պարունակում է կատաղության վիրուսի մաքրված հակածին (Պիտման-Մուրի ենթատեսակ) (3218-ՎԵՐՈ), հարմարեցված և աճեցված Վերո բջիջների վրա, ինակտիվացված β -պրոպիոլակտոնի օգնությամբ, ոչ պակաս 2.5ՄՄ:
5. Վերականգնվում է 1մլ ներարկումների համար նախատեսված մանրէազերծ ջրով:
6. Ներմուծման եղանակը և դեղաչափը. 1մլ, միջմկանային ներարկման համար:
7. Լուծիչ. մանրէազերծ ջուր՝ ներարկումների համար:
8. Օժանդակ նյութեր. սախարոզ, գլիցին, մարդկային շիճուկային ալբումին:

3. ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

9. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն նախատեսված է երեխաների և մեծահասակների մոտ կատաղության կանխարգելման համար:
10. Կատաղության կանխարգելման նպատակով կարող է կիրառվել նախքան ազդեցությունը (առանց կծված դեպքի առկայության) և ազդեցությունից (կծված դեպքից) հետո:

- 1) Կանխարգելում նախքան ազդեցությունը: Առաջարկվում է կատարել այն անձանց, ովքեր ենթակա են կատաղության վիրուսով վարակման բարձր ռիսկի, հատկապես՝ անասնաբույժներին, ուսանող-անասնաբույժներին, կենդանիների տերերին, որսորդներին, անտառային տնտեսության աշխատակիցներին, կենդանիներ վարժեցնողներին, մսագործներին, լաբորատորիաների՝ կատաղության վիրուսի հետ աշխատող անձնակազմին, կատաղության վիրուսով վարակման բարձր ռիսկի ենթակա երեխաներին, կամ բարձր էնդեմիկություն ունեցող տարածքներ այցելելուց առաջ:
- 2) Կանխարգելում ազդեցությունից հետո: ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ի կիրառումը ցուցված է կատաղության վիրուսով վարակվածության կասկածով անձանց մոտ կատաղության կանխարգելման համար: ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն անհրաժեշտ է մշտապես կիրառել Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկություններին համապատասխան, կախված կատաղությամբ կասկածելի հիվանդ կենդանու հետ շփման տեսակից:

Դասեր	Շփման տեսակը	Առաջարկվող բուժումը
1	Կենդանուն հայումը կամ կերակրելը: Չվնասված մաշկային ծածկույթի թքոտում	Բուժում չի պահանջվում
2	Չպաշտպանված մաշկային ծածկույթների կծվածք, աննշան քերծվածքներ կամ չարյունահոսող վերքեր	Անհրաժեշտ է անհապաղ պատվաստում
3	Միանգամյա կամ բազմակի կծվածքներ կամ քերծվածքներ, լորձաթաղանթների վարակում թքով, վնասված մաշկային ծածկույթների թքոտում: Չղջիկի կողմից ցանկացած թքոտում կամ վնասվածք:	Անհրաժեշտ է անհապաղ պատվաստում և իմունոգլոբուլինի կիրառում

- 11.Բոլոր դեպքերում առաջարկվում է անհապաղ կատարել բոլոր վերքերի և քերծվածքների լվացում:
12. Անհրաժեշտության դեպքում պետք է կատարել փայտացման կանխարգելում՝ փայտացման անատոքսինով:

13. Բուժումն անհրաժեշտ է սկսել շփումից հետո որքան հնարավոր է շուտ, և ոչ մի դեպքում չի կարելի հրաժարվել պացիենտին բուժելուց, անկախ նրանից, թե որքան ժամանակ է անցել վնասվածքից հետո:

4. ՀԱԿԱՅՈՒՑՈՒՄՆԵՐ

14. Կանխարգելում նախքան ազդեցությունը: Տենդային վիճակի կամ սուր հիվանդության առկայության դեպքում պատվաստումն անհրաժեշտ է հետաձգել: ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ի կիրառումը հակացուցված է նրա բաղադրիչներից որևէ մեկի նկատմամբ պացիենտի անամնեզում սուր գերզգայնության ռեակցիայի առկայության դեպքում:

15. Կանխարգելում ազդեցությունից հետո: Հաշվի առնելով կատաղությամբ հիվանդանալու դեպքում մահվան ելքի հավանականությունը, ազդեցությունից հետո ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ով կանխարգելման համար հակացուցումը բացակայում է:

16. Արգելվում է պատվաստանյութի ներմաշկային ճանապարհով ներարկումն այն անձանց, որոնք երկարատև բուժում են ստացել կորտիկոստերոիդներով կամ իմունասուպրեսիվ դեղամիջոցներով, կամ մալարիայի բուժման կամ կանխարգելման նպատակով քլորոֆին են ստացել, ինչպես նաև թուլացած իմունիտետով անձանց: Տվյալ անձանց մոտ կատաղության պատվաստանյութի ներմաշկային ներարկման դեպքում իմուն պատասխանը կարող է թույլ լինել, այդ պատճառով անհրաժեշտ է պատվաստանյութը նրանց ներարկել միջմկանային:

17. Պատվաստանյութը կարող է նեոմիցինի հետքեր պարունակել: Նեոմիցինից անաֆիլակտիկ կամ անաֆիլակտիդ ռեակցիաները, անաֆիլակտիկ կամ անաֆիլակտիդ ռեակցիաները բացարձակ հակացուցում են հանդիսանում:

5. ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

18. Արգելվում է պատվաստանյութի ներանոթային ներարկումը:

19. Արգելվում է իմունոգլոբուլինը և կատաղության պատվաստանյութը մեկ ներարկչի մեջ խառնելը, կամ մարմնի նույն հատվածում ներարկելը:

20. Ծանր ալերգաբանական ռեակցիայի առաջացման դեպքում անհրաժեշտ է կատարել համապատասխան դեղորայքային (օրինակ՝ ադրենալինի կիրառում) և ախտանշանային բուժում:

6. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

21. Անհրաժեշտ է գնահատել ալերգաբանական ռեակցիաների առաջացման հավանականությունն այն անձանց մոտ, որոնք զգայուն են պատվաստանյութի բաղադրիչների նկատմամբ: Անաֆիլաքսիայի կամ սուր գերզգայնության ռեակցիայի առաջացման դեպքում անհետաձգելի օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ է ունենալ ադրենալինի հիդրոքլորիդի լուծույթ (1:1000) և այլ համապատասխան միջոցներ:

22. Անհրաժեշտ է հատուկ զգուշություն ցուցաբերել և թույլ չտալ պատվաստանյութի ներարկում արյունատար անոթի մեջ:

23. Ոչ մի դեպքում չի թույլատրվում մեկ ներարկչի մեջ խառնել կամ մարմնի նույն հատվածում ներարկել ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն և իմունոգլոբուլինը:

24. Յուրաքանչյուր պացիենտի համար անհրաժեշտ է օգտագործել առանձին մանրէազերծ ներարկիչ և ասեղ:

25. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ի ներերակային ներարկումը խիստ արգելվում է: Ինչպես բոլոր միջմկանային ներարկումների ժամանակ, ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ի ներարկման ժամանակ նույնպես, արյան մակարդելիության խանգարումներ ունեցող պացիենտների մոտ հնարավոր է արյունահոսություն:

7. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՆԵՐՄԱՇԿԱՅԻՆ ՆԵՐԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

26. Շատ կարևոր է, որ ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ի ներմաշկային ներարկումը կատարվի միայն տվյալ ներարկումը կատարելու համար ուսուցանված բուժանձնակազմի կողմից, որպեսզի բացառվի պատվաստանյութի անցումը մաշկի տակ:

27. Ներմաշկային ներարկումը կատարվում է ֆիքսված ասեղ ունեցող միանգամյա օգտագործման ներարկչով (ինսուլինային): Ճիշտ ներարկման դեպքում առաջանում է լիմոնի կեղևի տեսքով բշտիկ (պապուլա): Մաշկի տակ պատվաստանյութի շատ խորը ներարկման ժամանակ, բշտիկ չի առաջանում: Այդ դեպքում պետք է ասեղը հանել և մի փոքր հեռու ներարկել: Եթե երկու հաջորդաբար կատարված ներարկումներից բշտիկ չի առաջանում, անհրաժեշտ է պատվաստանյութը պացիենտին միջմկանային ներարկել:

28. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն կոնսերվանտներ չի պարունակում, այդ պատճառով անհրաժեշտ է շատ զգույշ լինել՝ վերականգնված պատվաստանյութի կոնտամինացիայից խուսափելու համար: Վերականգնված պատվաստանյութն

անհրաժեշտ է օգտագործել վերականգնելուց հետո 6 ժամվա ընթացքում, +2°C – +8°C ջերմաստիճանում նրա պահպանման դեպքում:

29.6 ժամվա ընթացքում չօգտագործված վերականգնված պատվաստանյութն անհրաժեշտ է ոչնչացնել:

30. Խաչաձև աղտոտումից խուսափելու համար յուրաքանչյուր պացիենտի համար պատվաստանյութի յուրաքանչյուր դեղաչափը հավաքելու և ներարկելու համար անհրաժեշտ է օգտագործել նոր ստերիլ ներարկիչ և ասեղ:

8. ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

31. Կորտիկոստերոիդները, քլորոֆինը և այլ իմունասուպրեսիվ դեղամիջոցները կարող են նվազեցնել պատվաստանյութի ներարկման նկատմամբ իմուն պատասխանը և պատվաստման անարդյունավետության պատճառ դառնալ:

32. Իմունոգլոբուլինը և պատվաստանյութն անհրաժեշտ է ներարկել մարմնի տարբեր (հակադիր) հատվածներում:

33. Արգելվում է գերազանցել կատաղության իմունոգլոբուլինի սահմանված դեղաչափը, ինչպես նաև արգելվում է պատվաստման կուրսը սկսելուց հետո իմունոգլոբուլինի կրկնակի դեղաչափի կիրառումը, քանի որ իմունոգլոբուլինի դեղաչափի ավելացումը կարող է նվազեցնել ներարկված պատվաստանյութի նկատմամբ իմուն պատասխանը:

9. ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄ

34. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն համարվում է անվտանգ, ոչ տերատոգեն պատվաստանյութ:

Հղի առնետների շրջանում պատվաստանյութի ներարգանդային տոքսիկության ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել տոքսիկ ազդեցություն պտղի ներարգանդային զարգացման վրա: Հայտնի չէ, թե կարող է արդյոք ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն վնասել պտղին՝ հղի կնոջ պատվաստման դեպքում, կամ բացասական ազդեցություն ունենալ վերարտադրողական ֆունկցիայի վրա: Տեղեկատվություն չկա նաև այն մասին, թե անցնում է արդյոք ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն կրծքի կաթի մեջ:

35. Հղի կանանց կամ կրծքով կերակրողներին նախքան ազդեցությունը (առանց կծված դեպքի առկայության) ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ով կանխարգելիչ պատվաստում կատարելուց առաջ անհրաժեշտ է մանրամասն գնահատել պատվաստումից ակնկալվող օգուտը՝ պոտենցիալ ռիսկերի համեմատությամբ:

36. Հաշվի առնելով կատաղությամբ հիվանդանալու դեպքում մահվան ելքի հավանականությունը, ազդեցությունից (կծված դեպքից) հետո հղիությունը և կրծքով կերակրելը ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ով պատվաստման համար հակացուցում չեն հանդիսանում:

10. ԿՈՂՄՆԱԿԻ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ

37. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ի կիրառման արդյունքում կարող են առաջանալ ներարկման տեղում ցավ, կարմրություն, այտուց, քոր և կոշտություն, ինչպես նաև ընդհանուր երևույթներ՝ տենդ, ցնցումներ, ուշագնացության, ասթենիա, գլխացավ, գլխապտույտ, մկանային ցավեր, սրտխառնոց, ցավեր որովայնի շրջանում, հոդացավեր: Սովորաբար այս երևույթները ցածր հաճախականություն և անցողիկ բնույթ ունեն, անցնում են առանց բարդությունների: Հազվադեպ, բազմաձև կարմրությունը նկատվում է հյուսվածքային կուտուրաներից ստացված կատաղության այլ պատվաստանյութերի դեպքում:

11. ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԸ ԵՎ ԴԵՂԱԶԱՓԸ

38. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն վերականգնվում է մանրէազերծ ներարկչով և ասեղով, օգտագործելով հավաքածուի մեջ առկա լուծիչի ամբողջ ծավալը (ներարկման համար նախատեսված մանրէազերծ ջուր): Պատվաստանյութը թափահարում են մինչև չոր փոշու լուծվելը: Պատվաստանյութն անհրաժեշտ է օգտագործել վերականգնելուց անմիջապես հետո:

39. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս պատվաստանյութի շշիկի ցուցիչը (ՊՇՑ) գտնվում է պատվաստանյութի շշիկի կափարիչի վրա, պատվաստանյութը վերականգնելուց հետո այն ոչնչացնում են:

40. Պատվաստում կատարելուց առաջ լուծիչը և պատվաստանյութը զննվում են՝ համոզվելու համար, որ մեխանիկական խառնուրդները և ֆիզիկական հատկությունների շեղումները բացակայում են: Ցանկացած թերություն հայտնաբերելու դեպքում լուծիչը կամ վերականգնված պատվաստանյութը ոչնչացվում է:

41. Մեծահասակներին և 2 տարեկանից բարձր տարիքի երեխաներին պատվաստումը կատարվում է բազկի դելտայաձև մկանի մեջ, իսկ մինչև 2 տարեկաններին՝ ազդրի առաջադրսային մակերեսին:

42. Չի թույլատրվում կատաղության պատվաստանյութը ներարկել նստատեղի շրջանում, քանի որ այս դեպքում նվազում է իմուն պատասխանը:

43. Պատվաստանյութի ներմաշկային ներարկումը կատարվում է այն երկրներում, որտեղ պատվաստանյութի ներմաշկային ներարկումը թույլատրված է պետական առողջապահական մարմինների կողմից և թույլատրվում է կատարել այն անձանց, որոնք ենթարկվել են 2-րդ և 3-րդ դասերի վիրուսների ազդեցությանը:

1) Կանխարգելում նախքան ազդեցությունը (առանց կծված դեպքի առկայության)

ա. Կատաղության վիրուսով վարակման բարձր ռիսկի ենթակա անձանց շրջանում անհրաժեշտ է կիրառել պատվաստման հետևյալ սխեման.

Ներմուծման ճանապարհը	Դեղաչափ	Դեղաչափերի թիվը	Ժամանակացույց
Միջմկանային	1 մլ	3	0, 7-րդ և 21-րդ կամ 28-րդ օրեր
Ներմաշկային	0,1 մլ	3	0, 7-րդ և 21-րդ կամ 28-րդ օրեր

բ. Լրացուցիչ պաշտպանության ապահովման նպատակով, այն անձանց, ովքեր իրենց գործունեության բնույթի հետ կապված մշտապես կամ հաճախ ենթարկվում են կատաղության վիրուսով վարակման ռիսկի, առաջարկվում է պարբերաբար պատվաստում ստանալ:

գ. Այն անձանց, ովքեր ենթարկվում են կատաղության կենդանի վիրուսի բարձր կոնցենտրացիայի լաբորատոր ազդեցության ռիսկի, անհրաժեշտ է յուրաքանչյուր 6 ամիսը 1 անգամ հակաճինների մակարդակի որոշման հետազոտություն անցնել:

դ. Այն աշխատակիցները, որոնք իրենց գործունեության բնույթի հետ կապված ազդեցության մշտական ռիսկի չեն ենթարկվում, պետք է շճաբանական հետազոտության ենթարկվել 2 տարին մեկ անգամ:

ե. Քանի որ պատվաստման արդյունքում առաջացած իմունիտետը մեծ մասամբ պահպանվում է մի քանի տարի, կրկնապատվաստումն անհրաժեշտ է կատարել այն դեպքերում, երբ կատաղության վիրուսին չեզոքացնող հակամարմինների տիտրը նվազում է մինչև 0,5 ՄՄ/մլ մակարդակը:

2) Կանխարգելում ազդեցությունից (կծված դեպքից) հետո

ա. Կատաղության վիրուսն առավելագույն ձևով հեռացնելու նպատակով անհրաժեշտ է անհապաղ լավ լվանալ վերքը ջրով և օճառով: Այնուհետև վերքն անհրաժեշտ է մշակել սպիրտով (70%) կամ յոդի լուծույթով:

բ. Ազդեցությունից հետո նախկինում չպատվաստված անձանց մոտ կատաղության կանխարգելման համար կիրառվում է պատվաստման հետևյալ ժամանակացույցը.

Ներմուծման ճանապարհը	Դեղաչափ	Դեղաչափերի թիվը	Ժամանակացույց
Միջմկանային	1 մլ	5	0, 3-րդ, 7-րդ, 14-րդ և 28-րդ օրեր
Ներմաշկային	0,1 մլ + 0,1 մլ	4	0, 3-րդ, 7-րդ և 28-րդ օրեր

գ. Ներմաշկային ներարկման դեպքում չորս դեղաչափ պետք է ներարկվի (2-ական ներարկում յուրաքանչյուրը 0.1մլ մարմնի 2 տարբեր հատվածներում) վերը ներկայացված թափանդական Կարմիր խաչի նորացված ժամանակացույցին համապատասխան (2-2-2-0-2):

դ. Նախկինում պատվաստման ամբողջական կուրսը ստացած անձանց (նախա- և հետազդեցությունային կանխարգելում), առաջարկվում է ներարկել 2 դեղաչափ, յուրաքանչյուրը 1մլ, միջմկանային, կամ 2 դեղաչափ, յուրաքանչյուրը 0.1մլ՝ ներմաշկային՝ 0 և 3-րդ օրերին:

ե. Ազդեցության 3-րդ և 2-րդ դասերի դեպքում իմունային անբավարարությամբ պացիենտներին 0 (ազդեցության) օրը կատաղության ինակտիվացված (լիոֆիլացված) պատվաստանյութի հետ անհրաժեշտ է ներարկել կատաղության մարդկային իմունոգլոբուլին (20 ՄՄ/կգ) կամ կատաղության ձիու իմունոգլոբուլին (40 ՄՄ/կգ): Եթե անատոմիական տեղակայումը թույլ է տալիս, վերքի շուրջը և վերքի ներսային մակերեսը պետք է ներծծել կատաղության իմունոգլոբուլինի ամբողջական դեղաչափով: Իմունոգլոբուլինի մնացած քանակությունը ներարկվում է մարմնի այն հատվածի հակադիր հատվածում (մյուս կողմի վերջույթին), որտեղ ներարկվել է կատաղության պատվաստանյութը:

զ. Կատաղության իմունոգլոբուլինն անհրաժեշտ է վերականգնել այն ծավալով, որն անհրաժեշտ է բոլոր վերքերի արդյունավետ և անվտանգ ներծծման համար:

է. Եթե պատվաստանյութի առաջին դեղաչափի ներարկման ժամանակ կատաղության իմունոգլոբուլին առկա չէ, այն պետք է ներարկվի պատվաստանյութի առաջին դեղաչափի ներարկումից հետո 7 օրից ոչ ուշ, քանի որ իմունոգլոբուլինի

ավելի ուշ ներարկումը կարող է նվազեցնել պատվաստանյութի նկատմամբ իմուն պատասխանը:

12. ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

44. Պատվաստանյութն անհրաժեշտ է պահել $+2^{\circ}\text{C}$ -ից մինչև $+8^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում:

45. Լուծիչը պետք է պահվի սառը տեղում, բայց չսառեցվի:

13. ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

46. Պատվաստանյութի պիտանելիության ժամկետը 36 ամիս է:

14. ԹՈՂԱՐԿՄԱՆ ՁԵՎԸ

47. ՌԱԲԻՎԱՔՍ-Ս-ն թողարկվում է հետևյալ ձևերով.

- 1) 1 դեղաչափանոց հավաքածու՝ 1մլ-ոց 22իկ պատվաստանյութով և 1մլ լուծիչ:
- 2) 1 դեղաչափանոց հավաքածու՝ 1մլ-ոց 22իկ պատվաստանյութով, 1մլ լուծիչ, ներարկիչ և ասեղ:
- 3) 1 դեղաչափանոց 5 22իկ (1մլ-ոց) պատվաստանյութ և 5 սրվակ (1 մլ) լուծիչ:

15. ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՇՇԻԿԻ ՑՈՒՑԻՉ

48. Հնարավոր են հետևյալ տարբերակները.

- 1) Ներքին քառակուսին շրջանակից բաց գույն ունի: Եթե պիտանելիության ժամկետը չի լրացել, ապա պատվաստանյութը ենթակա է օգտագործման:
- 2) Եթե ներքին քառակուսին դեռևս ավելի բաց գույն ունի, քան շրջանակը, իսկ պիտանելիության ժամկետը չի լրացել, ապա պատվաստանյութը ենթակա է օգտագործման:
- 3) Պատվաստանյութը ենթակա է խոտանման, եթե.
Ներքին քառակուսու գույնը համընկնում է շրջանակի գույնին:
Պատվաստանյութը չի կարելի օգտագործել:
- 4) Պատվաստանյութը համարվում է բացարձակ ոչ պիտանի, եթե.
Ներքին քառակուսին շրջանակից մուգ գույն ունի: Պատվաստանյութը չի կարելի օգտագործել:

Պատվաստանյութի 22իկի ցուցիչ		
	✓	Ներքին քառակուսին ավելի բաց գույնի է, քան արտաքին շրջանը: ՕԳՏԱԳՈՐԾԵԼ պատվաստանյութը, եթե պիտանելիության ժամկետն անցած չի:

	✓	Ներքին քառակուսին գույնը փոխել է, բայց ավելի բաց գույնի է, քան արտաքին շրջանը: ՕԳՏԱԳՈՐԾԵԼ պատվաստանյութը, եթե պիտանելիության ժամկետն անցած չի:
	X	Անհրաժեշտ է խոտանել Ներքին քառակուսու գույնը հավասարվել է արտաքին շրջանի գույնի հետ: ԶՕԳՏԱԳՈՐԾԵԼ պատվաստանյութը:
	X	Խոտանման ժամկետն անցել է Ներքին քառակուսին ավելի մուգ գույնի է, քան արտաքին շրջանը: ԶՕԳՏԱԳՈՐԾԵԼ պատվաստանյութը:

49. Կատաղության ինակտիվացված (լիոֆիլացված) պատվաստանյութի շշիկի ջերմաստիճանային զգայորոշիչը գտնվում է շշիկի կափարիչի վրա: Գունավոր կետը, որը հայտնվում է շշիկի վրա, դա հենց պատվաստանյութի ջերմաստիճանային զգայորոշիչն է, որը գրանցում է շշիկի ջերմաստիճանի փոփոխությունները: Այն հանդիսանում է շշիկի տաքացման զգայորոշիչը և նախազգուշացնում է օգտագործողին շշիկի տաքացման հետևանքով պատվաստանյութի վնասվելու մասին:

50. Պատվաստանյութի շշիկի ջերմաստիճանային զգայորոշիչի մեկնաբանությունը շատ հեշտ է: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել քառակուսու գույնին, որն աստիճանաբար փոխվում է: Եթե ներքին քառակուսին ավելի բաց գույն ունի, քան քառակուսին, ապա պատվաստանյութը ենթակա է օգտագործման: Եթե ներքին քառակուսին և շրջանակը նույն գույնն ունեն, կամ ներքին քառակուսին ավելի մուգ գույն ունի քան շրջանակը, ապա պատվաստանյութն օգտագործման ենթակա չէ:

51. Արտադրող՝ Հնդկաստան, Սերում ինստիտուտ

Խադապսար 212/2, Պունե 411028: